

## Արման Իսրայելյան

### Ճննդյան թիվը և վայրը՝

Ճնվել E 1970թ.՝ քաղաք Ալավերդի, Հայաստան:

### Կրթություն՝

- 1987 – 1992թթ.** Երևանի Պետական համալսարանի պատմության ֆակուլտետ;
- 1995թ.** Լիդսի համալսարանի Քաղաքական և դիվանագիտական ուսումնասիրությունների կենտրոնի դիվանագիտական դասընթացներ (Լիդս, Միացյալ Թագավորություն);
- 1997թ.** Ջորջ Մարշալի անվան անվտանգության ուսումնասիրությունների կենտրոնի գործադիր դասընթացներ (գերազանցությամբ), Գարմիշ-Պարտենկիրխեն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն);
- 1998թ.** «ՆԱՏՕ-ի դերը խաղաղապահ գործողություններում» դասընթացներ, ՆԱՏՕ-ի Պաշտպանական քոլեջ (Ջոն, Իտալիա);
- 1999թ.** Մասնագիտացված դասընթացներ «Գիտելիքների կառավարում և դիվանագիտություն», Դիվանագիտական ուսումնասիրությունների միջերկրյա ծովյան ակադեմիա (Սլիեմա, Մալթա);
- 2002թ.** «Քիմիական զենքի արգելման կոնվենցիայի ազգային կիրարկման գործում ներգրավված անձնակազմի համար նախատեսված դասընթացներ» (Հաագա, Նիդերլանդներ);
- 2003թ.** Միացյալ Ազգերի Կազմակերպության ապառազմականացման ոլորտի մասնագիտական ծրագիր;
- 2004թ.** «Միջազգային մարդասիրական օժանդակության առաքելությունների ընթացքում քաղաքացիական և ռազմական համակարգման խնդրներին նվիրված ՄԱԿ-ի ուսուցողական վարժանքներ» (Շվարցենբուրգ, Շվեյցարիա);
- 2005թ.** «ԱՊՀ անդամ-երկրների երկակի նշանակության ապրանքների վերահսկողության հարցերով զբաղվող պաշտոնյաների համար մասնագիտացված դասընթացներ», (Տոկիո, Ճապոնիա);
- 2013թ.** «Էներգետիկ անվտանգությունը և միջազգային օրենքը» դասընթացներ, ՄԱԿ/ՄԳԻՄՈ (Մոսկվա, ՌԴ);
- 2014թ.** «Անդրազգային սպառնալիքները ռազմավարական համատեքստում». Գործադիր դասընթացներ, Մերձավոր Արևելքի Հարավային Ասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոն (Վաշինգտոն, ԱՄՆ):

### Աշխատանքային գործունեություն՝

- 2022թ.** ՀՀ ԱԳՆ քարտուղարության խորհրդական;
- 2018 - 2022թթ.** Գործուղվել է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ, որպես արտաքին կապերի վարչության պետ;
- 2018թ.** Բելգիայի Թագավորությունում ՀՀ դեսպանություն արտակարգ

դեսպանորդ և լիազոր նախարար;

**2014 - 2017թթ.** Բելգիայի Թագավորությունում ՀՀ դեսպանություն խորհրդական;

**2013 - 2014թթ.** ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչության խորհրդական, Եվրոպայի խորհրդում ՀՀ նախագահության աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի անդամ;

**2010 - 2013թթ.** Չինաստանի ժողովրդական Հանրապետությունում ՀՀ դեսպանության խորհրդական;

**2008 - 2010թթ.** ՆԱՏՕ-ի բաժնի վարիչ, ՀՀ ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչություն;

**2005 - 2008թթ.** ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության խորհրդական;

**2002 - 2005թթ.** Սպառազինությունների վերահսկման և ոչ-կոնվենցիոնալ խնդիրների բաժնի վարիչ, ՀՀ ԱԳՆ ՍԿՄԱ վարչություն;

**1999 - 2002թթ.** Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ դեսպանության առաջին քարտուղար;

**1998 - 1999թթ.** Երկրորդ քարտուղար, ՀՀ ԱԳՆ ՍԿՄԱ վարչության վերիֆիկացիայի և սովորական սպառազինությունների վերահսկման բաժին;

**1994 - 1998թթ.** ՆԱՏՕ-ի բաժնի կցորդ, ապա երրորդ քարտուղար, ՀՀ ԱԳՆ ռազմաքաղաքական հարցերի վարչություն;

**1992 - 1994թթ.** Տևորենի տեղակալ, Օտար լեզուների ուսուցման մասնավոր կենտրոն:

2022թ. մայիսի 6-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակել է Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության առաքելության ղեկավար (նստավայրը՝ Բրյուսել):

### **Օտար լեզուների իմացություն՝**

ռուսերեն, անգլերեն:

### **Դիվանագիտական աստիճան՝**

արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

### **Ընտանեկան կարգավիճակ՝**

ամուսնացած է, ունի դուստր և որդի: